ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ИСТОРИЯ И КУЛЬТУРА

## АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

# HISTORY AND CULTURE

## JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

*Խմբագրական խորհուրդ՝*

**Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

*Редакционная коллегия:*

**Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

*Editorial Board:*

**Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.).

**ISSN 1829-2771**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
# СОДЕРЖАНИЕ / CONTENT

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY


**Էդիկ Մինասյան** - ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ..... 6

**Эдик Минасян** - АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА ... 26

**Edik Minasyan** - ARMENIAN-TURKISH RELATIONS DURING THE YEARS OF INDEPENDENCE OF THE RA ..... 28

**Էդուարդ Զոհրաբյան** - ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1930-1980-ԱԿԱՆ ԹԹ. ..... 31

**Эдуард Зограбян** - ПРОЦЕСС ИДЕОЛОГИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ С 1930 ПО 1980-ЫЕ ГОДЫ ..... 39

**Eduard Zohrabyan** - THE PROCESS OF IDEOLOGICAL TNANSFORMATION OF SOCIIETY IN Soviet Armenia in 1930-1980 ..... 39

**Ֆելիքս Մովսիսյան** - ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ ..... 40

**Феликс Мовсисян** - АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ ОБ ИРЛАНДСКОМ НАЦИОНАЛЬНОМ ДВИЖЕНИИ 1840-Х ГОДОВ ..... 57

**Feliks Movsisyan** - ARMENIAN PUBLIC OPINION ON THE IRISH NATIONAL MOVEMENT OF THE 1840s ..... 57

**Валерий Тунян** - ПОБОРНИКИ ОТРИЦАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН ..... 59

**Վալերի Թունյան** - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՁԱՏԱԳՈՎՆԵՐԸ ..... 64

**Valery Tunyan** - DEFENDERS OF THE DENIAL OF THE ARMENIAN GENOCIDE ..... 64

**Վանիկ Վիրաբյան** - ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ ..... 65

**Ваник Вирабян** - МЕЖЭТНИЧЕСКИЕ СОБЫТИЯ И АНТАНТОВСКИЕ ГОСУДАРСТВА В ЗАКАВКАЗЬЕ ПОСЛЕ ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ 1917 ГОДА ..... 82

**Vanik Virabyan** - INTERETHNIC DEVELOPMENTS AND THE ENTENTE STATES IN TRANSCAUCASIA AFTER THE OCTOBER 1917 REVOLUTION ..... 82

**Սարգիս Գրիգորյան** – ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ..... 84

**Саргис Григорян** - АКТИВНОСТЬ АЗЕРБАЙДЖАНСКИХ ИСЛАМИСТОВ НА КАВКАЗЕ И БЛИЖНЕМ ВОСТОКЕ ..... 91

**Sargis Grigoryan** – ACTIVITY OF AZERBAIJANI ISLAMISTS IN THE CAUCASUS AND IN THE MIDDLE EAST ..... 92

**Նառա Սարգսյան** - ՀԱՄԻԴՅԱՆ ՁԱՐԴԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ» ՎԻՊԱԿՈՒՄ ..... 93

**Нара Саргсян** – ОТРАЖЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ ХАМИДИЙСКОЙ РЕЗНИ В ПРОИЗВЕДЕНИИ АРПИАР АРПИАРЯНА “БАГРОВОЕ ПРИНОШЕНИЕ” ..... 101

**Nara Sargsyan** – THE REFLECTION OF PSYCHOLOGICAL INFLUENCE OF HAMIDIAN MASSACARES IN ARPIAR ARPIARYAN'S NOVELETTE "THE CRIMSON OFFERING" ..... 101

**Էդգար Չախոյան** - Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունները Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության առաջին շրջանում (2004-2007 թթ.) ..... 102

**Эдгар Чахоян** – ДИПЛОМАТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ГРУЗИИ И США ПРИ ПЕРВОМ ПРЕЗИДЕНТСКОМ СРОКЕ МИХАИЛА СААКАШВИЛИ (2004-2007 гг.) ..... 112

**Edgar Chakhoyan** - DIPLOMATIC RELATIONS BETWEEN GEORGIA AND THE USA DURING THE FIRST PERIOD OF THE PRESIDENCY OF MIKHAIL SAAKASHVILI (2004-2007) ..... 113

**Арман Сафарян** – О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ КОНВЕРГЕНТНОЙ И МУЛЬТИМЕДИЙНОЙ ЖУРНАЛИСТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ ..... 114

**Արման Սաֆարյան** – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՐԳԵՆՏ և ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ..... 118

**Safaryan Arman** – ON SOME FEATURES OF CONVERGENT AND MULTIMEDIA JOURNALISM IN THE REPUBLIC OF ARMENIA ..... 118

**Անդրանիկ Եսայան** – ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVIII Դարի ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ ..... 119

**Андраник Есаян** – СИТУАЦИЯ В СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 18 ВЕКА .....125

**Andranik Yesayan** – THE SITUATION IN NORTHEASTERN ARMENIA IN THE FIRST QUARTER OF THE 18-TH CENTURY ..... 126

**Տարոն Սաքոյան** - ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (2010-2016) ... 127

**Тарон Сакоян** - ИНТЕРЕСЫ И ПРОТИВОРЕЧИЯ ТУРЦИИ И РОССИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В НОВЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ РЕАЛИЯХ (2010-2016) ..... 136

**Taron Sakoyan** - INTERESTS AND CONTRADICTIONS BETWEEN TURKEY AND RUSSIA IN THE SOUTH CAUCASUS IN NEW GEOPOLITICAL REALITIES (2010-2016) ..... 136

**Majid Karimi** - THE ETIMOLOGY AND ORIGINS OF THE NAME NAKHICHEVAN FROM THE HISTORICAL SOURCES ..... 137

**Մաջիդ Քարիմի** - ՆԱԽԻՋԵՎԱՆ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ..... 147

**Маджид Карими** - ЭТИМОЛОГИЯ И ПРОИСХОЖДЕНИЕ НАЗВАНИЯ НАХИДЖЕВАН ПО ИСТОРИЧЕСКИМ ИСТОЧНИКАМ ..... 147

**Օֆելյա Դարբինյան** - ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ..... 148

**Офелия Дарбинян** - ОСОБЕННОСТИ РЕПАРТАЦИИ ЛИВИНСКИХ АРМЯН, РЕЗУЛЬТАТЫ И ПОСЛЕДСТВИЯ (1946-1949 ГГ.) ..... 158

**Ofelya Darbinyan** - PECULIARITIES, RESULTS AND CONSEQUENCES OF THE REPATRIATION OF THE LEBANESE-ARMENIANS (1946-1949) ..... 158

**Արևշատ Մինասյան** - ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ..... 159

**Аревшат Минасян** - АРМЯНСКАЯ ОБЩИНА УРУГВАЯ ..... 164

**Arevshat Minasyan** - THE ARMENIAN COMMUNITY OF URUGUAY ..... 164

**Միքայել Միքայելյան** - ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԵՈՍ II ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՀԵՏ ..... 166

**Микаел Микаелян** - ВСТРЕЧА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН МАТТЕОСА II ИЗМИРЛЯНА С РОССИЙСКИМ ИМПЕРАТОРОМ НИКОЛАЕМ II ..... 172

**Mikayel Mikayelyan** - MEETING OF CATHOLICOS OF ALL ARMENIANS MATTEOS II IZMIRLYAN WITH RUSSIAN EMPEROR NICHOLAS II ..... 172

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ** / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

**Սամվել Մկրտչյան** - ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ ..... 173

**Самвел Мкртчян** – ПРОЯВЛЕНИЕ ЭТНИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ И ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ В АРМЯНСКОЙ ПРАЗДНИЧНООБРЯДНОЙ КУЛЬТУРЕ .....178

**Samvel Mkrtchyan** - MANIFESTATIONS OF ETHNIC IDENTITY AND HISTORICAL MEMORY IN THE ARMENIAN FESTIVAL AND RITUAL CULTURE ..... 178

**ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ** / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

**Մերի Հովհաննիսյան** - ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 180

**Мери Оганнисян** - *ОСОБЕННОСТИ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ* ..... 186

**Meri Hovhannisyan** - PECULIARITIES OF PROJECT-BASED LEARNING ..... 186

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ .. 188
ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆԳՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ..... 190
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ..... 192

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

НА ПЕРЕКРЕСТКЕ ИСТОРИЧЕСКИХ И ЕСТЕСТВЕННЫХ НАУК ..... 194

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ..... 196
INFORMATION ABOUT THE AUTHORS ..... 197

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ..... 198

Էդգար Չախոյան

# ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԽԵԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2004-2007 ԹԹ.)

***Հիմնաբառեր.*** Վրաստան, ԱՄՆ, ժողովրդավարություն, նախագահի արտահերթ ընտրություններ, ՆԱՏՕ, Արևմուտք, ՌԴ, դիվանագիտական հարաբերություններ, Հարավային Կովկաս, տարածաշրջանային անվտանգություն, պետքարտուղար, արտահերթ ընտրություններ, «Լուգարի» հետազոտական կենտրոն:

*Հոդվածը նվիրված է Վրաստանում Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության առաջին շրջանում՝ 2004-2007 թթ., Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունների ուսումնասիրությանը: Մանրամասնորեն լուսաբանված են կողմերի միջև դիվանագիտական հարաբերությունների ձևավորման, խորացման և ամրապնդման պատմությունը, ներքին ու արտաքին քաղաքական զարգացումները, ինչպես նաև երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների հաճախակի հանդիպումների արդյունքում ձեռքբերված դիվանագիտական հաջողությունները: Վերհանվել և ուսումնասիրվել են ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ Կրտսեր վարչակազմի արտաքին քաղաքական մոտեցումները Վրաստանի նկատմամբ, մասնավորապես Վարդերի հեղափոխությունից մինչև 2007 թ. վերջերը, ինչպես նաև Վրաստանում կատարվող փոփոխությունների հետևանքով ՀՀ-ի համար առաջացած խնդիրները: Ամբողջապես քննության առարկա են դարձել նախագահ Բուշի (2005 թ. մայիսին)՝ Թբիլիսի կատարած այցի առանձնահատկությունները, տարածաշրջանում սպասվող փոփոխությունները և Վրաստանը ժողովրդավարություն «արտահանող» երկրի վերածման միտումները: Վերլուծվել են կողմերի միջև ստորագրված երկկողմ փաստաթղթերի դերն ու նշանակությունը: Դիտարկվել են տարաբնույթ փաստեր, որոնք նպաստել են Վրաստանի և Միացյալ Նահանգների միջև երկկողմ ու բազմակողմ դիվանագիտական հարաբերությունների զարգացմանը: Առանձնակի ուշադրություն է դարձված Վրաստանի և Ռուսաստանի Դաշնության միջև դիվանագիտական հարաբերությունների վատթարացման իրական պատճառների բացահայտմանը: Հոդվածում կարևոր տեղ է հատկացված նաև Վրաստանում արտահերթ ընտրությունների արդար ու թափանցիկ կազմակերպման համար ԱՄՆ ֆինանսական և գործուն աջակցության նպատակների ուսումնասիրությանը:*

Յուրաքանչյուր ինքնիշխան պետության զարգացման հիմնական գրավականներից է երկրի ճկուն և բազմակողմ արտաքին քաղաքականության ստեղծումը, որի միջոցով հնարավոր կլինի ձեռք բերել ավելի շատ բարեկամ, գործընկեր ու դաշնակից երկրներ:

Վրաստանում անկախության հռչակումից անմիջապես հետո սկսվեցին զանգվածային անկարգություններ, տարբեր ուժերի հակադրություն և քաղաքացիական պատերազմ: Անկախ նրանից, որ երկիրը գտնվում էր սոցիալ-տնտեսական ու ներքաղաքական ճգնաժամի մեջ, կարողացավ դիվանագիտական հարաբերություններ հաստատել մի շարք երկրների, այդ թվում՝ նաև ԱՄՆ-ի հետ:

ԽՍՀՄ փլուզումից հետո՝ 1991 թ. դեկտեմբերի 25-ին, ԱՄՆ-ն ճանաչեց Վրաստանի անկախությունը, իսկ 1992 թ. մարտի 24-ին նախագահ Ջորջ Հերբերտ Ուոլկեր Բուշի որոշմամբ կողմերի միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ [1]: Վրաստանը, միջազգայնորեն դե յուրե անկախ պետություն դառնալով, կարողացավ ձևավորել ինքնուրույն ներքին ու արտաքին քաղաքականություն, միևնույն ժամանակ հնարավորություն ստացավ դեսպանատներ բացելու այն երկրներում, որոնց հետ ցանկանում էր խորացնել երկկողմ և բազմակողմ դիվանագիտական հարաբերությունները:

Առհասարակ Վրաստանի և Միացյալ Նահանգների միջև հարաբերությունները դիտարկելով առանձին հարթության վրա՝ անհրաժեշտ է վերլուծել փոխգործակցության

* Հոդվածը ներկայացվել է 10.12.2021 թ., գրախոսվել՝ 20.12.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.12.2021 թ.:

[1] Տե՛ս George Bush, Public Papers of the Presidents of the United States (1992-93), Book I – January 1 to July 31, 1992, Washington, 1993, էջ 502-503, https://www.govinfo.gov/content/pkg/PPP-1992-book1/pdf/PPP-1992-book1.pdf, դիտումը՝ 16.12.2020:

աստիճանական զարգացման ընթացքը պատմական հաջորդականության ու շարունակականության համատեքստում:

Նորանկախ պետության առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի կարճ իշխանության ընթացքում Վրաստանի արտաքին քաղաքականության մեջ առկա էր երկիմաստություն և անորոշություն, սակայն իրավիճակը փոխվեց երկրորդ նախագահ Էդուարդ Շևարդնաձեի նախագահության օրոք[1]: Նրա քաղաքական փորձի, անձնական կապերի ու համակրանքների հիման վրա երկիրը դարձավ ավելի պաշտոնական և միջազգային ձևաչափերին համահունչ:

ԽՍՀՄ նախկին արտաքին գործերի նախարար է. Շևարդնաձեի դերը մեծ էր Վրաստանի և Միացյալ Նահանգների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման գործում, քանի որ նա սերտ կապեր ուներ ԱՄՆ նախագահ Ջ. Բուշ Ավագի և պետքարտուղար Ջեյմս Բեյքերի (James Baker) հետ[2]: Ընդհանուր առմամբ Միացյալ Նահանգներն ու Արևմուտքը համակրում էին Շևարդնաձեին Եվրոպայում լարվածությունը մեղմելու, Գերմանիան վերամիավորելու և Խորհրդային Միության զորքերի դուրսբերման գործում մեծ ներդրում ունենալու համար[3]: 1992 թ. ապրիլի 23-ին Վրաստանի և ԱՄՆ-ի միջև դիվանագիտական հարաբերությունները ամրապնդվեց Թբիլիսիում ԱՄՆ դեսպանատան բացմամբ[4]:

ԱՄՆ-ի հետ հարաբերություններում Շևարդնաձեի վարչակազմի ձեռքբերումներից էր Բաքու–Թբիլիսի–Ջեյհան խողովակաշարի նախագիծը, որը ամբողջությամբ շրջանցում էր ՌԴ-ն և դառնում այլընտրանք Վրաստանի ու Արևմուտքի երկրների համար[5]: Այս նախագիծը ամրապնդեց իր դիրքերը հաջորդ ընտրություններից առաջ, քանի որ կայունությունը կարևոր պահանջ էր ծրագրի կյանքի կոչման նպատակով: Վաշինգտոնը նույնպես սատարում էր Շևարդնաձեին՝ արտաքին քաղաքական ասպարեզում ամերիկյան շահերին համահունչ գործելու համար, իսկ Վրաստանը, օրինակ, չհապաղեց իր աջակցությունը հայտնել Վաշինգտոնին սեպտեմբերի 11-ի հայտնի ախաբեկչության ժամանակ և Իրաք ներխուժումից հետո[6]: Վրաստանի նախագահը հետագայում նույնպես հաճախ էր զրուցում (մշտական կապի մեջ էր) նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերի, Բուշ Ավագի, Բուշ Կրտսեր և ամերիկյան այլ ազդեցիկ պաշտոնյաների հետ[7]: ԱՄՆ-ում սա նաև որպես աջակցության աղբյուր ծառայեց Շևարդնաձեին:

1992-2003 թթ. Վրաստանը դարձավ մեկ շնչի հաշվով ամենամեծ ամերիկյան ժողովրդավարության և տնտեսական զարգացման օժանդակություն ստացող երկրներից մեկը. Շևարդնաձեի պաշտոնավարման տասնմեկ տարիների ընթացքում Վրաստանը ԱՄՆ-ից ստացել է շուրջ մեկ միլիարդ դոլարի աջակցություն[8]:

Չնայած ԱՄՆ-ն ի սկզբանե աջակցում էր Շևարդնաձեին, նույնիսկ անձնական կապերի պատճառով, այնուամենայնիվ, Միացյալ Նահանգները, ի վերջո, որոշեց աջակցել «Վարդերի հեղափոխությանը» Վրաստանում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի և քաղաքացիական հասարակության ամրապնդման պատրվակներով: Դա հիմնականում պայմանավորված էր նրանով, որ Շևարդնաձեին մոտ գտնվող անձինք, ինչպես Բեյքերը, այնպես էլ Ջ. Բուշ Ավագը, հետագայում հեռացան Օվալաձև գրասենյակից և այլևս ամերիկյան ակտիվ քաղաքական կայսրության մաս չէին: Հետևաբար այն ազդեցությունը,

---

[1] Տե՛ս David Aprasidze, 25 Years of Independent Georgia Achievements and Unfinished Projects, “25 Years of Georgia's Democratization: Still Work in Progress”, Edited by Gia Nodia, Konrad-Adenauer-Stiftung, Ilia State University, 2016, էջ 105:

[2] Տե՛ս S. Neil MacFarlane, Georgian Foreign Policy: The Quest for Sustainable Security, The Reluctant Patron: Georgia-U.S. Relations, Edited by Kornely Kakachia and Michael Cecire, Konrad-Adenauer-Stiftung, Tbilisi, 2013, էջ 81:

[3] Տե՛ս გია ჯოხთაბერიძე, რკინის ფარდიდან აბრეშუმის გზამდე, “ედუარდ შევარდნაძის პოლიტიკური მოღვაწეობა”, თბილისი 2018 (Գ. Ջոխթաբերիձե, «Երկաթե վարագույրից Մետաքսի ճանապարհ», «Էդուարդ Շևարդնաձեի քաղաքական գործունեությունը», Թբիլիսի 2018), էջ 16:

[4] Տե՛ս U.S. Embassy in Georgia, “U.S.-Georgia Relations: 23 Years Old and Getting Stronger (April 23)”, Tbilisi, 23 April, 2015, https://ge.usembassy.gov/u-s-georgia-relations-23-years-old-getting-stronger-april-23/, դիտումը՝ 03.02.2021:

[5] Տե՛ս Jim Nichol, Georgia and the Caucasus region, “Armenia, Azerbaijan, and Georgia: Political Developments and Implications for U.S. Interests”, Edited by Fran W. Haro, New York, 2010, էջ 90:

[6] Տե՛ս Lincoln A. Mitchell, Uncertain Democracy: U.S. Foreign Policy and Georgia's Rose Revolution, University of Pennsylvania Press, Philadelphia, 2009, էջ 114:

[7] Տե՛ս Lincoln Mitchell, Current History, “Georgia’s Rose Revolution”, Volume 103, Issue 675, University of California Press, October 2004, էջ 345-346.

[8] Տե՛ս Charles King, The Ghost of Freedom, "A History of the Caucasus", Oxford 2008, էջ 230:

որն առկա էր անձնական կապերի գոյության միջոցով, վերացավ առանցքային գործիչների հեռանալուց հետո, դրա հետ միասին՝ Շևարդնաձեի աջակցությունը: Երկրորդ պատճառը կապված էր կոռուպցիայի հետ, որը Շևարդնաձեի կառավարման կողմնակի ազդեցությունն էր, ինչը թուլացրեց երկիրը՝ այն դարձնելով խոցելի թիրախ ոչ բարեկամ պետությունների համար, ինչպես նաև Վրաստանը սկսել էր լայնացնել կապերը ՌԴ-ի հետ:

Նման իրավիճակում Միացյալ Նահանգները նախընտրեց վստահել մի երիտասարդ ուժի, որը նոր լիցք կարող էր հաղորդել Վրաստանի հետ երկկողմ և բազմակողմ դիվանագիտական հարաբերություններում:

Վրաստանում ներքաղաքական լարվածությունն ավարտվեց նրանով, որ Շևարդնաձեն հրաժարական տվեց քրեական հետապնդումից անձեռնամխելիության դիմաց, և Բուրջանաձեին ԱՄՆ-ն ճանաչեց որպես նախագահի պաշտոնակատար [1]: Այսպիսով, 2003 թ. նոյեմբերի 23-ին Վրաստանում տեղի ունեցած «Վարդերի հեղափոխությունից» հետո երկրի նախագահի լիազորություններն անցավ խորհրդարանի խոսնակ Նինո Բուրջանաձեին: Վերջինիս նախաձեռնությամբ էլ կազմակերպվեցին և անցկացվեցին նախագահական արտահերթ ընտրություններ[2]:

2004 թ. հունվարի 4-ին Վրաստանում տեղի ունեցած նախագահի արտահերթ ընտրությունների արդյունքում 96,27 տոկոս ձայների գերակշռությամբ հաղթանակ տարավ «Միացյալ ազգային շարժում» կուսակցության առաջնորդ Միխեիլ Սաակաշվիլին[3]:

Քվեարկության արդյունքները միջազգային դիտորդների կողմից օրինական ճանաչվելուց հետո նախագահի պաշտոնը ստանձնեց երիտասարդ Միխեիլ Սաակաշվիլին՝ Կոլումբիայի (ԱՄՆ) համալսարանում կրթություն ստացած, օտար լեզուների իմացությամբ, նախորդ տասնամյակում ԱՄՆ ժողովրդավարության աջակցության ծրագրերով հովանավորված, Վրաստանում համակրելի ու ազդեցիկ քաղաքական գործիչներից մեկը[4]:

Վրաստանում հեղափոխության արդյունքում ձևավորված նոր իշխանություններից ակնկալվում էր Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունների ընդլայնում, խորացում և ամրապնդում, որին սկիզբ տրվեց Սաակաշվիլիի նախագահի երդմնակալության տեքստի բովանդակությամբ [5]: Միևնույն ժամանակ Վրաստան-ԱՄՆ հարաբերություններին սպասվում էր զարգացման նոր փուլ և հեռանկար, որը, ըստ երևույթին, պայմանավորված էր Մ. Սաակաշվիլիի վարչակազմի արտաքին քաղաքականության գերակայություններով ու Արևմուտքի հետ հարաբերությունների խորացման ձգտումներով:

2004 թ. հունվարի 25-ին Սաակաշվիլիի նախագահի երդմնակալությանը ներկա էին տարբեր երկրների՝ ՌԴ-ի, ՀՀ-ի, Ադրբեջանի, Թուրքիայի, բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ նաև ԱՄՆ պատվիրակությունը պետքարտուղար Քոլին Փաուելի գլխավորությամբ[6]:

Երդմնակալությունից անմիջապես հետո պետքարտուղար Ք. Փաուելը, Վրաստանի նախագահի պաշտոնը նոր ստանձնած Մ. Սաակաշվիլիի հետ հանդիպման ընթացքում գովեստի խոսքեր ասելով երիտասարդ վարչակազմին, վստահեցրեց, որ ԱՄՆ-ն

---

[1] Տե՛ս Mindia Vashakmadze, From Revolution to the Reform: Georgia's Struggle with Democratic Institution Building and Security Sector Reform, "Democracy and Security: The Legal Framework of Security Sector Governance in Georgia", Editors: Philipp H. Fluri and Eden Cole, Vienna and Geneva, July 2005, էջ 45:

[2] Տե՛ս Niklas Nilsson, The guns of August 2008: Russia's war in Georgia, "Georgia Rose Revolution: The Break with the Past", Edited by Svante E. Cornell, S. Frederick Starr, Central Asia-Caucasus Institute, Armonk, New York, 2009, էջ 88:

[3] Տե՛ս ცესკო, მედია რელიზი, "ცესკო საპრეზიდენტო არჩევნების შედეგებს აცხადებს", 15 იანვარი, 2004 (ԿԸՀ, լրատվամիջոցների հաղորդագրություն, «ԿԸՀ-ն հայտարարում է նախագահի ընտրությունների արդյունքները», 2004 թ. հունվարի 15-ը), https://cesko.ge/geo/list/show/333-cesko-saprezidento-archevnebis-shedegebs-acxadebs-1985, դիտումը՝ 14.12.2020:

[4] Տե՛ս Charles King, The Ghost of Freedom, "A History of the Caucasus", Oxford 2008, էջ 230-231:

[5] Հատված Սաակաշվիլիի երդմնակալության տեքստից ԱՄՆ-ի վերաբերյալ. «Միևնույն ժամանակ, մենք երախտապարտ ենք և գնահատում ենք այն օգնությունը, որը ցուցաբերել է Միացյալ Նահանգները տարիներ շարունակ, երբ Վրաստանը բախվում էր ամենաբարդ դժվարությունների, երբ մենք ամենահուսահատ ժամանակ ընկերոջ կարիքն ունեինք, Միացյալ Նահանգները աջակցում էր մեզ: Դա երբեք չի մարելու մեր հիշողություններից, և վրաց ժողովուրդը երախտագիտության այս զգացումը կփոխանցի հաջորդ սերունդներին, ինչպես եվրոպացիները, որոնց Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին օգնեցին ամերիկացիները, և նրանք նույնը արեցին պատերազմից հետո»: Տե՛ս President Saakashvili's Inauguration Speech, *Civil.ge,* 25/01/2004 - 17:44, https://civil.ge/archives/186853, դիտումը՝ 01.02.2021:

[6] Տե՛ս U.S. Department of State, "Inauguration of Georgian President Mikheil Saakashvili", Archive, Tbilisi, Georgia, January 25, 2004, https://2001-2009.state.gov/secretary/former/powell/photos/28481.htm, դիտումը՝ 03.02.2021:

պատրաստ է կողմերի միջև հարաբերությունները բարձրացնել նոր որակական մակարդակի, աջակցել Վրաստանին և նրա ժողովրդին երկրի բոլոր ոլորտներում՝ անվտանգության, ռազմական, քաղաքական, իրավական, տնտեսական և այլն՝ իրականացնելու բարեփոխումներ և ամրապնդելու ժողովրդավարության ու քաղաքացիական հասարակության գոյության հիմքերը[1]: ԱՄՆ-ն առանց ժամանակ կորցնելու Փաուելի միջոցով Սաակաշվիլիին պաշտոնապես հրավիրեց Վաշինգտոն՝ փետրվարի 25-ին նախագահ Ջ. Բուշի հետ հանդիպման[2]: Սրանից կարելի է եզրակացնել, որ ԱՄՆ-ն ցանկանում էր երկկողմ ինտենսիվ փոխայցերի միջոցով ցուցադրել Հարավային Կովկասում իր մեծ դերակատար լինելու փաստը, քանզի Վրաստանը նոր հնարավորություն էր ԱՄՆ-ի համար՝ կովկասյան տարածաշրջան մուտք գործելու և իր կամքը թելադրելու Սև ու Կասպից ծովերի ավազաններում, ինչպես նաև Նոր մետաքսե ճանապարհի վերահսկման նպատակով:

Նույն օրը՝ Փաուելը վրացական «Ռուսթավի-2» հեռուստաընկերության («Rustavi-2» TV) լրագրող Ակակի Գոգիչաիշվիլիի հետ հարցազրույցի ժամանակ, հստակորեն ընդգծել է Վրաստանի հետ հարաբերությունների զարգացման ուղղությունները՝ ժողովրդավարության զարգացման, անվտանգության ապահովման, տնտեսական ու ֆինանսական աջակցության, ՆԱՏՕ և ԵՄ անդամակցության աջակցության, Աբխազիայի ու Հարավային Օսիայի կոնֆլիկտների Վրաստանի տարածքային ամբողջականության սկզբունքով խաղաղ կարգավորման և այլն[3]:

2004 թ. փետրվարի 11-ին՝ որպես Վրաստանի նախագահի առաջին պաշտոնական այցը ԱՄՆ կատարելուց առաջ, Սաակաշվիլին Մոսկվայում հանդիպել է ՌԴ նախագահ Վ. Պուտինի հետ[4], որպեսզի ռուս կոլեգայից լսելով Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշումները կարողանա ավելի հստակ և վստահորեն բանակցել ամերիկյան գործընկերների հետ:

Նույն թվականի փետրվարի 25-ին Սաակաշվիլին պաշտոնապես այց կատարեց ԱՄՆ և հաջորդ օրը Օվալաձև գրասենյակում հանդիպեց նախագահ Ջ. Բուշ Կրտսերի հետ: Նախագահները քննարկեցին երկկողմ հարաբերություններին առնչվող բազում հարցեր՝ քաղաքական, անվտանգային, տնտեսական, մշակութային, իրավական, ժողովրդավարության զարգացման և այլն, բացի դրանից՝ Բուշը խոստացել էր աջակցել Վրաստանից ռուսական զորքերի դուրսբերման գործընթացում:[5] Այս հանդիպման արդյունքում կարող ենք եզրակացնել, որ Սաակաշվիլին պատրաստ էր կրել ամերիկյան արժեքները և ապրել նրանց առաջարկած ապագայում՝ միաժամանակ ստանալով անվտանգության երաշխիքներ՝ Ռուսաստանից ակնկալվող ցանկացած ագրեսիայից պաշտպանվելու համար:

Վաշինգտոնում նախագահների հանդիպմանը հաջորդեց գործողությունների նախաձեռնման և իրականացման շարքը:

2004 թ. Թբիլիսիում մեկնարկեց Վրաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող, ԱՄՆ սենատոր Ռիչարդ Լուգարի անունը կրող լաբորատորիայի շինարարությունը՝ հիմնվելով 1997 թ. ԱՄՆ-ի և Վրաստանի կառավարությունների կողմից ստորագրված շրջանակային համաձայնագրի[6], ինչպես նաև ԱՄՆ-ի և Վրաստանի պաշտպա-

---

[1] Տե՛ս U.S. Department of State, Secretary Colin L. Powell, “Remarks With Georgian President Mikheil Saakashvili at Town Hall Event”, Archive, Tbilisi, January 25, 2004, https://2001-2009.state.gov/secretary/former/powell/remarks/28484.htm, դիտումը՝ 14.02.2021:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս U.S. Department of State, Secretary Colin L. Powell, “Interview With Akaki Gogichaishvili of Rustavi 2 TV, Georgia”, Archive, Tbilisi, January 25, 2004, https://2001-2009.state.gov/secretary/former/powell/remarks/28480.htm, դիտումը՝ 15.02.2021:

[4] Տե՛ս Андрей Колесников, “Михаил Саакашвили сверился с Владимиром Путиным протокол”, Газета “Коммерсантъ”, №25, 12.02.2004, էջ 2:

[5] Տե՛ս The White House, “President Bush Welcomes Georgian President Saakashvili to White House”, February 25, 2004, https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2004/02/20040225-1.html, դիտումը՝ 02.03.2021:

[6] Տե՛ս საქართველოს საკანონმდებლო მაცნე, საქართველოს საგარეო საქმეთა მინისტრი, "შეთანხმება საქართველოსა და ამერიკის შეერთებულ შტატებს შორის მასობრივი განადგურების იარაღის გავრცელების თავიდან აცილების სფეროში თანამშრომლობისა და თავდაცვითი და სამხედრო კავშირების გაღრმავების შესახებ". 1997 წლის 17 ივლის, სარეგისტრაციო კოდი; 000000430.00.003.000073 (Վրաստանի օրենսդրական տեղեկագիր, Վրաստանի արտաքին գործերի նախարար, «Համաձայնագիր՝ Վրաստանի և ԱՄՆ-ի միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածումը կանխելու և պաշտպանական ու ռազմական

նության նախարարությունների միջև 2002 թ. կնքված կենսաբանական զենքերի զարգացման հետ կապված պաթոգենեզի և փորձի ներդրումը կանխարգելելու ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագրի վրա[1]: Այս նախագիծը իրականացնելու համար ԱՄՆ-ն շուրջ 350 մլն դոլարի ներդրում կատարեց Վրաստանի տնտեսություն[2]:

2004 թ. ապրիլի 26-ին՝ Վաշինգտոնում պետքարտուղար Փաուելի հետ հանդիպման ժամանակ, Վրաստանի վարչապետ Զուրաբ Ժվանիան քննարկել է Վրաստանում պետական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության զարգացման օրակարգը, ինչպես նաև Աջարիայի հիմնախնդրի կարգավորման հարցերը[3]: Ժվանիան, պետքարտուղարի մոտ հատուկ ընդգծելով Վրաստանին Վարդերի հեղափոխությունից հետո աջակցության չափերով ԱՄՆ առաջնային երկրներից լինելու փաստը, ակնկալում էր ավելի մեծ ներդրումներ ու ֆինանսական աջակցություն ստանալ Միացյալ Նահանգներից պետական ինստիտուտները եվրոպական երկրների չափանիշներին համահունչ դարձնելու նպատակով:

2004 թ. նոյեմբերի 18-ին Վրաստանի Վարդերի հեղափոխության արժեքը բարձրացնելու նպատակով ԱՄՆ Սենատը միաձայն ընդունեց հանրապետական սենատորներ Զոն Մաքքեյնի և Ռիչարդ Լուգարի կողմից ներկայացրած S.Res.472 բանաձևը, ըստ որի՝ ԱՄՆ-ն, շնորհավորելով վրաց ժողովրդին Վարդերի հեղափոխության առաջին տարեդարձի առթիվ, մեծարեց նախագահ Միխեիլ Սաակաշվիլիին՝ բարձր գնահատելով խաղաղ ու ժողովրդավարական Վրաստանին, օրենքի գերակայությանը, բաց շուկայական տնտեսությանը, տարածաշրջանային համագործակցությանը և արևմտյան ինստիտուտներին սերտ ինտեգրվելու տեսլականին և նվիրվածությանը[4]: Սա ևս մեկ ազդակ էր ԱՄՆ-ից Վրաստանին սատար լինելու և ռուսական ազդեցությունը մեկընդմիշտ վերացնելու համար:

2004 թ.՝ Վրաստանում ընտրությունների միջոցով Սաակաշվիլիի իշխանության վերջնական ձևավորվելուց հետո, Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունների խորացման համատեքստում շատ կարևոր էր նաև ԱՄՆ ընտրություններում Բուշ Կրտսերի վերընտրվելը, քանի որ երկու երկրների միջև զարգացող հարաբերությունները կապված էին նաև այդ անձանց և իրենց վարչակազմերի ունեցած մտերմության հետ:

2005 թ. հունվարի 20-ին տեղի ունեցավ վերընտրված Ջ. Բուշ Կրտսեր նախագահի երդմնակալության արարողությունը, որտեղ իր ելույթում առաջնահերթություն համարեց ազատության և ժողովրդավարության տարածման աջակցությունը, ինչպես նաև ահաբեկչության դեմ պայքարը, որոնք ամբողջովին տեղավորվում էին Վրաստանի հետ հարաբերությունների հետագա զարգացման քաղաքականության շրջանակներում[5]:

Վրաստանի համար ԱՄՆ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների զարգացման կարևորությունը նկատվում էր անգամ Բուշի այցելության նախօրեին Թբիլիսիում կատարվող նախապատրաստական աշխատանքներից[6]: Սաակաշվիլիին չխանգարեց նույնիսկ վարչապետ Զուրաբ Ժվանիայի (2005 թ. փետրվարի 3)[7] մահը՝ կազմակերպելու շքեղ ընդունելություն ամերիկյան գործընկերոջ համար: Ժվանիան մեծ դեր

---

կապերի ամրապնդման շուրջ համագործակցության մասին», 1997 թ. հուլիսի 17, գրանցման ծածկագիր՝ 000000430.00.003.000073):

[1] Տե՛ս Ministry of Foreign Affairs of Georgia, “Comment by the MFA of Georgia in response to the comment of the Information and Press Department of the MFA of the RF”, 27 May, 2020, https://mfa.gov.ge/News/sagareo-saqmeta-saministros-presisa-da-informa-(6).aspx?CatID=5&lang=en-US, դիտումը՝ 11.03.2021:

[2] «Լուգար» հետազոտական կենտրոնը մի շարք կենսապաշտպանական համագործակցության համաձայնագրերի արդյունք է: Այն առաջին անգամ բացվել է 2011 թ., սակայն ամբողջությամբ գործում է 2013 թվականից: նրա սեփականությունն ամբողջությամբ փոխանցվեց Վրաստանի կառավարությանը միայն 2018 թ.: Այսօր կենտրոնը գործում է Վրաստանի հիվանդությունների վերահսկման և հանրային առողջության ազգային կենտրոնի (NCDCPH) կողմից և ծառայում է որպես հանրային առողջության համակարգի տեղեկատու լաբորատորիա: Տե՛ս **Zaal Anjaparidze,** Russia Dusts Off Conspiracy Theories about Georgia’s Lugar Center Laboratory in Midst of COVID-19 Crisis, Eurasia Daily Monitor Volume: 17, Issue: 62, The Jamestown Foundation, May 5, 2020, https://jamestown.org/about-us/support-jamestown/, դիտումը՝ 12.03.2021

[3] Տե՛ս U.S. Department of State, Secretary Colin L. Powell, “Remarks with Georgian Prime Minister Zurab Zhvania After Their Meeting”, Archive, Washington, DC, April 26, 2004, https://2001-2009.state.gov/secretary/former/powell/remarks/31815.htm, դիտումը՝ 03.03.2021:

[4] Տե՛ս S.Res.472 - A resolution to honor the people of Georgia on the first anniversary of the Rose Revolution, sponsored by John McCain (R-AR) and Richard Lugar (R-IN), 108th Congress (2003-2004), *Gongress.gov,* 18 November, 2004, https://www.congress.gov/bill/108th-congress/senate-resolution/472/text, դիտումը՝ 12.03.2021:

[5] Տե՛ս George W. Bush, Decision Points, Freedom Agenda, Crown Publishers, New York, 2010, էջ 240:

[6] Տե՛ս გაზეთი 24 საათი, შაბათი, 7 მაისი, 2005 წელი («24 ժամ», շաբաթ, 7-ը մայիսի, 2005 թ.), №101 (961), էջ B1:

[7] Տե՛ս “ზურაბ ჟვანიას გარდაცვალებიდან 7 წელიწადი გავიდა” (Զուրաբ Ժվանիայի մահից անցել է 7 տարի), *netgazeti.ge,* 03.02.2012, https://netgazeti.ge/news/12565/, դիտումը՝ 08.04.2021:

է ունեցել ԱՄՆ դիրքերը Վրաստանում ամրապնդելու գործում անգամ ի հիշատակ վարչապետի՝ 2005 թ. փետրվարի 8-ին ԱՄՆ Սենատը քննարկեց S.Res.46 բանաձևը[1] և ապրիլի 5-ին Ներկայացուցիչների պալատը 402 կողմ և 0 դեմ քվեարկությամբ ընդունեց H.Res.108 բանաձևը, ըստ որի՝ ցավակցում էին Ժվանիայի ընտանիքին ու վրաց ժողովրդին անդառնալի կորստի համար և համերաշխության ձեռք մեկնում՝ աջակցելու, նրա տեսլականը առաջ տանելու,Վրաստանը ԵՄ և ՆԱՏՕ անդամ դարձնելու գործում[2]:

Վրաց ժողովրդի և Սաակաշվիլիի վարչակազմի համար կարևոր իրադարձություն ու պատմական իրողություն էր ԱՄՆ նախագահ Ջ. Բուշի այցը Վրաստան:

2005 թ. մայիսի 9-ին նախագահ Ջորջ Բուշը և նրա կինը՝ Լորան, պատմության ընթացքում առաջին անգամ այցելեցին Թբիլիսի (Հարավային Կովկաս)[3]: Այս այցն առանձնահատուկ էր և՛ Բուշի, և՛ Սաակաշվիլիի վարչակազմերի համար, քանի որ երկուստեք յուրովի քաղաքական առավելության հասան իրենց մրցակից կամ հակառակորդ երկրների հանդեպ: ԱՄՆ-ն Վրաստանի միջոցով ներխուժեց Հարավային Կովկաս և ցույց տվեց Ռուսաստանին, Իրանին, Չինաստանին և մյուս երկրներին Բուշի ժողովրդավարության քարոզչության ուժն ու հնարավորությունները: Սաակաշվիլին թվում էր, թե գտավ այլընտրանք Ռուսաստանի ազդեցությունը թոթափելու և արևմտյան անվտանգային համակարգերում ընդգրկվելու տարբերակ, որը, անշուշտ, իր հետ բերելու էր ֆինանսական ներհոսք և անվտանգային ժամանակակից համակարգ ու երաշխիք, սակայն իրականությունն այլ էր:

Պատահական չէր, որ մայիսի 10-ին Թբիլիսիի Ազատության հրապարակում ժողովրդի հետ հանդիպման ժամանակ Միացյալ Նահանգների նախագահ Ջորջ Բուշը Վրաստանն անվանեց տարածաշրջանի «ժողովրդավարության փարոս» [4] : Բուշի վարչակազմի ժողովրդավարության տարածման գաղափարական ուղղվածությունը բնականաբար համապատասխանում էր այն պատկերին, որը Սաակաշվիլին փորձում էր մշակել Վրաստանում: Նույն այցի ժամանակ Սաակաշվիլին Բուշին հանձնեց Սուրբ Գեորգիի հաղթանակի շքանշանը (Saint George's Order of Victory) աշխարհում ազատության ու ժողովրդավարության բնագավառում մեծ ջանքերի գործադրման համար[5]: Սաակաշվիլին Բուշին գոհացնելու համար, բացի շքանշան տալուց, նաև Թբիլիսիի օդանավակայանից քաղաքի կենտրոն տանող Մելաանիի անունը կրող հիմնական մայրուղին վերանվանեց Բուշի պատվին[6]: Անշուշտ, Սաակաշվիլիի վարչակազմի այս քայլը խորը հետք է թողել երկու երկրների միջև հարաբերությունների հետագա զարգացման վրա:

ԱՄՆ-ն Հարավային Կովկասում պատմության ողջ ընթացքում նման աջակցություն դեռևս չէր ունեցել: Բուշը Թբիլիսիի Ազատության հրապարակում իր ելույթով Վրաստանին դարձրեց աշխարհով մեկ ժողովրդավարության շարժումների մոդել:

Կողմերի միջև հարաբերությունները ստացան անհատականացված տեսք, քանի որ Սաակաշվիլին և Բուշը կառուցեցին այնպիսի բարեկամություն, որը հիմնված էր իրենց կառավարությունների փոխադարձ աջակցության, ժողովրդավարության և ազատության գլոբալ տարածման ձգտումների և ազատ քաղաքական շուկայի խթանման հարցերի շուրջ ընդհանուր քաղաքական տեսլականի վրա, ինչպես նաև ահաբեկչության դեմ միջազգային

---

[1] Տե՛ս S. Res.46 - A resolution commemorating the life of the late Zurab Zhvania, former Prime Minister of the Republic of Georgia, 109th Congress (2005-2006), *Congress.gov,* https://www.congress.gov/bill/109th-congress/senate-resolution/46, դիտումը՝ 01.06.2021:

[2] Տե՛ս H.Res.108 - Commemorating the life of the late Zurab Zhvania, Prime Minister of the Republic of Georgia, 109th Congress (2005-2006), *Congress.gov,* https://www.congress.gov/bill/109th-congress/house-resolution/108, դիտումը՝ 01.06.2021:

[3] Տե՛ս **Francoise J. Companjen,** The Colour Revolutions in the Former Soviet Republics; Successes and failures, "Georgia", Edited by Donnacha Ó Beacháin and Abel Polese, Routledge, London and New York, 2010, էջ 25: (Ebook)

[4] Տե՛ս Tinatin Khorbaladze, George W Bush visit to Tbilisi, Georgia, YouTube.com, 3:50-4:00 ր. https://www.youtube.com/watch?v=W76ykx0nmlw, դիտումը՝ 08.04.2021: Տե՛ս նաև Dana Bash, John King and Jill Dougherty, Bush: Georgia "beacon of liberty", *CNN,* Tbilisi, Georgia, May 11, 2005, https://edition.cnn.com/2005/WORLD/europe/05/10/bush.tuesday/, դիտումը՝ 08.04.2021:

[5] Տե՛ս Simon Whelan, Bush visit to Georgia increases tensions with Putin government, *WSWS,* 18 May 2005, https://www.wsws.org/en/articles/2005/05/geor-m18.html, դիտումը՝ 09.04.2021:

[6] Տե՛ս დარეჯან ანდრიაძე, "ვის რაში სჭირდება საქართველოში მაკეინის ქუჩები?!", საქართველო და მსოფლიო, სექტემბერი 6, 2018 (Դարեջան Անդրիաձե, «Ո՞ւմ են պետք Վրաստանում Մաքքեյնի փողոցները», Վրաստան և աշխարհ, 6 սեպտեմբերի, 2018 թ.), http://geworld.ge/ge/%E1%83%95%E1%83%98%E1%83%A1-%E1%83%A0%E1%83%90%E1%83%A8%E1%83%98-%E1%83%A1%E1%83%AD%E1%83%98%E1%83%A0%E1%83%93%E1%83%94%E1%83%91%E1%83%90-%E1%83%A1%E1%83%90%E1%83%A5%E1%83%90%E1%83%A0%E1%83%97/, դիտումը՝ 10.04.2021:

պայքար մղելու պատրաստակամությամբ[1]: Եթե համեմատենք նախորդ իշխանությունների հետ, ապա այս հարաբերությունները նման են ճիշտ Զ. Բուշ Ավագի և Է. Շևարդնաձեի վարչակարգերի կառուցած հարաբերություններին: Չնայած Վրաստանը ակնհայտորեն ի վիճակի չէր ֆինանսական կամ նույնիսկ նշանակալից քաղաքական աջակցություն ցուցաբերել Միացյալ Նահանգներին, այնուամենայնիվ Բուշի վարչակազմը բարձր գնահատեց նրանց պատրաստակամությունը ԱՄՆ-ին աջակցելու համար, ինչպես Իրաքում, Աֆղանստանում այնպես էլ այլ երկրներում և հարթակներում[2]:

Այսպիսով, 2003 թ.՝Վարդերի հեղափոխությունը սկիզբ դրեց Վրաստանի հետ ԱՄՆ հարաբերությունների արագ վերափոխմանը: Միխեիլ Սաակաշվիլիի գլխավորած կառավարության նոր թիմը քաջ հայտնի էր Միացյալ Նահանգների վարչակազմին և այն կազմակերպություններին, որոնք ֆինանսավորվում էին ԱՄՆ-ից: Սա կարևոր բաղադրիչ էր կողմերի միջև դիվանագիտական հարաբերությունների արագ ընդլայման և զարգացման ճանապարհին:

Վրաստանի և ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաների ինտենսիվ փոխայցերը և հանդիպումները ևս խթան հանդիսացան կողմերի միջև հարաբերությունների զարգացումը հասցնելու մինչև ամենաբարձր մակարդակի վրա, սակայն այդ ամենը տեղի ունացավ Վրաստան-ՌԴ դիվանագիտական հարաբերությունների վատթարացմանհաշվին: Վրաստանի նախագահ Սաակաշվիլին բոլոր առիթներն օգտագործում էր վնասելու Ռուսաստանի հեղինակությունն ու նվազեցնում տարածաշրջանում ունեցած դերը: Հատկանշական է, որ Սաակաշվիլին առանց որևէ ապացույցի ՌԴ ղեկավարությանը մեղադրեց 2006 թ. հունվարին պայթյունի հետևանքով գազատարի երկու գծերի (հիմնականը՝ 1200 մմ տրամագծով, պատկանում է Հյուսիսային Կովկաս-Անդրկովկաս գազատարին, պահուստայինը՝ 700 մմ տրամագծով (Մոզդոկ-Թբիլիսի մասնաճյուղ)) և Կովկասի էլեկտրահաղորդման գծի երկու հենասյուների ոչնչացման մեջ, որոնք Վրաստանին ու ՀՀ-ին մատակարարում էին ռուսական գազ և էլեկտրաէներգիա[3]:

Սաակաշվիլին այս հարցում մեղադրեց նաև ՀՀ ղեկավարությանը ՌԴ-ի դեմ ոչինչ չանելու և նրանց չմեղադրելու համար, իսկ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևին շնորհակալություն հայտնեց Վրաստանին ցուրտ օրերին էներգիայով ապահովելու համար, մինչդեռ Ադրբեջանը գազն ու էլեկտրաէներգիան Վրաստանին մատակարարել էր ՌԴ միջնորդությամբ և խնդրանքով, մինչև վնասված խողովակներն ու էլեկտրաէներգիայի լարերը կվերանորոգվեին[4]:

2006 թ. ԱՄՆ անկախության օրվա կապակցությամբ Սաակաշվիլին աշխատանքային այցով եղավ Վաշինգտոնում, և նախագահ Բուշի հետ քաղաքական, տնտեսական ու հումանիտար հարցերի քննարկումից բացի՝ նա հանդիպեց պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդին, ազգային հետախուզության տնօրեն Ջոն Նեգրոպոնտեին, Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռիչարդ Լուգարին, Համաշխարհային բանկի խորհրդին և այցի վերջին օրը տեսակցեց պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հետ[5]: Այս իրադարձությունները լայնորեն լուսաբանվեցին ինչպես վրացական և ամերիկյան, այնպես էլ ռուսական լրատվամիջոցներում: Որքան հաճախակի լինեին երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումների դինամիկան, այնքան ավելի մեծ կլիներ ֆինանսավորումը Վրաստանի համար:

2007 թ. մարտի 29-30-ը ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Մեթյու Բրայզան Վրաստանի ժողովրդավարական բարեփոխումների, հակամարտությունների խաղաղ կարգավորման, եվրաատլանտյան ինտեգրման, էներգետիկ ոլորտում և

---

[1] Տե՛ս Alexander Cooley & Lincoln A. Mitchell, No Way to Treat Our Friends: Recasting Recent U.S.–Georgian Relations, The Washington Quarterly, Published online: 09 Jan 2009, էջ 29, https://doi.org/10.1080/01636600802540895, դիտումը՝ 21.03.2021:

[2] Տե՛ս ჯორჯ ბუში: თქვენი ქვეყანა აშშ-ს ერთ-ერთი სერიოზულ მოკავშირეა, საქართველოს რესპუბლიკა გაზეთი, № 111 (5144), ოთხშაბათი, 11 მაისი 2005 წელი, (Զորջ Բուշ. Ձեր երկիրը ԱՄՆ-ի ամենալուրջ դաշնակիցներից մեկն է, «Վրաստանի Հանրապետություն» թերթ, № 111 (5144), չորեքշաբթի, 11 մայիսի, 2005), էջ 1:

[3] Տե՛ս Петр Бологов, Газовая вакханалия; Взрывы на газопроводе и ЛЭП вызвали в Грузии новый всплеск русофобии, *Lenta.ru,* 23 января 2006, https://lenta.ru/articles/2006/01/23/georgia/, դիտումը՝ 02.05.2021:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս The White House, “President Bush Welcomes President Saakashvili of Georgia to the White House”, July 5, 2006, https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2006/07/20060705-4.html, դիտումը՝ 12.04.2021:

վրացական տնտեսության շարունակական զարգացմանն առնչվող հարցերի քննարկման նպատակով աշխատանքային այց կատարեց Վրաստան և հանդիպեց ընդդիմության այն կուսակցություններին, որոնք ներկայացված էին խորհրդարանում[1]: Սա բոլոր ուժերին ամերիկյան քաղաքական ազդեցության տակ պահելու փորձ էր: Պատճառն այն էր, որ Ժվանիայի մահից հետո Վրաստանում մեծանում էր ներքաղաքական լարվածությունը, և ԱՄՆ-ն իր վերահսկողությունն էր պահում բոլոր ուժերի նկատմամբ հետագայում կառավարելի դարձնելու համար:

Կողմերի միջև դիվանագիտական հարաբերությունների խորացումն ու պետական պաշտոնյաների ինտենսիվ հանդիպումները նպաստեցին նաև ԱՄՆ և Վրաստանի կառավարությունների միջև օդային տրանսպորտի վերաբերյալ պայմանագրի կնքմանը: 2007 թ. հունիսի 21-ին Վաշինգտոնում ԱՄՆ-ի և Վրաստանի միջև կնքված օդային տրանսպորտի վերաբերյալ պայմանագիրը նոր հնարավորություն էր տալու քաղաքացիներին փոխայցեր կատարելու ինչպես զբոսաշրջիկի այնպես էլ գործարարի կարգավիճակով, բացի դրանից՝ նրանք ավելի հեշտ ու արագ կծանոթանային միմիյանց մշակույթին՝ Վրաստանը զերծ պահելով ռուսական մշակույթի տարածումից[2]:

Պետք է արձանագրենք նաև այն փաստը, որ Սաակաշվիլիի ղեկավարման առաջին շրջանի ավարտին արդեն գործում էր Վրաստանի և ԱՄՆ-ի միջև կնքված, տարբեր ոլորտներին առնչվող երկու տասնյակից ավելի երկկողմ պայմանագրեր և հուշագրեր[3]:

Արդեն 2007 թ. Վրաստանում նկատվում էր ներքաղաքական լարվածություն. Իշխանություններից դժգոհ քաղաքացիների թիվը, օր օրի մեծանալով, վերածվեց բազմահազարանոց հանրահավաքի, և նոյեմբերի 7-ին ուժայինները, օգտագործելով գազային նռնակներ, մահակներ ու ջրցան մեքենաներ, փորձեցին Թբիլիսիի խորհրդարանի մոտից ցրել ընդդիմադիրների և դժգոհ քաղաքացիների հանրահավաքները[4]: Ժողովրդավարական արժեքների բարձր գնահատականներ կրող երկրում իշխանությունները, նույնիսկ «Իմեդի» հեռուստաընկերության գրասենյակի վրա հարձակվելով, սահմանափակեցին ընդդիմադիրների ազատ խոսքի ու թափանցիկության իրավունքը[5]:

Սաակաշվիլին Վրաստանում բողոքի ակցիաների կազմակերպման, ոստիկանության ու ցուցարարների միջև բախումներ հրահրելու մեջ մեղադրեց Ռուսաստանին, անգամ պնդում էր ապացույցներ ունենալու փաստի մասին, որ անկարգությունների կազմակերպման ակունքներում ռուսական հետախուզությունն է կանգնած, և դրա հիման վրա Վրաստանից վտարեց երեք ռուս դիվանագետների, ինչպես նաև Մոսկվայից հետ կանչեց իր դեսպանին[6]: Սաակաշվիլին, այդպես էլ առանց փաստեր և ապացույցներ ներկայացնելու, դիվանագետներին հեռացնելով, վերջակետ դրեց Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերություններին, փոխարենը պարարտ հող ստեղծեց Արևմուտքի հետ հարաբերությունների ընդլայնման համար: Անշուշտ, Սաակաշվիլիի կողմից արված այս քայլը լուրջ խնդիրների առաջ կանգնեցրեց նաև Վրաստանում բնակվող որոշ ազգային փոքրամասնությունների, հատկապես Ջավախքի հայ համայնքին, որոնք իրենց ապրուստի հիմնական միջոցը վաստակում էին Ռուսաստանում արտագնա աշխատանքի մեկնելով:

2007 թ. նոյեմբերի 7-ին ռուսական Կոմերսանտ թերթը հրապարակեց մի հոդված, որում ընդդիմադիրները հերքում էին Կրեմլի կողմնակիցներ լինելու փաստը և օգնության համար դիմում ԱՄՆ-ին՝ պահանջելով լուծել Վրաստանում քաղաքական ճգնաժամը և փոխել կառավարման կարգը՝ նախագահականից անցում կատարել խորհրդարանականի[7]:

---

[1] Տե՛ս "Opposition Leaders Hail Talks with U.S. Diplomat", *Civil.ge,* 29/03/2007, https://civil.ge/archives/112165, դիտումը՝ 18.05.2021:

[2] Տե՛ս Department of State,Treaties and Other International Acts Series 07-1206, Civil Aviation, Transport Services, Agreement Between the USA and Georgia, Signed at Washington June 21, 2007:

[3] Տե՛ս United States Department of State, Treaties in Force, A List of Treaties and Other International Agreements of the United States in Force on January 1, 2010, էջ 104-105:

[4] Տե՛ս სალომე ჩადუნელი, 2007 წლის 7 ნოემბერი — მოვლენების ქრონოლოგია, On.ge, 7 ნოემბერი 2018, 20:15 (Սալոմե Չադունելի, 7 նոյեմբերի, 2007 թ. - Իրադարձությունների ժամանակագրություն, On.ge, 7 նոյեմբերի, 2018 թ.), դիտումը՝ 02.06.2021:

[5] Տե՛ս 2007 წლის 7 ნოემბერი - აქციის დარბევა და შეჭრა „იმედში“ (7 նոյեմբերի, 2007 թ. – ցրել ցույցը և ներխուժել «Իմեդի»), տեղադրվել է 07.11.2018 թ., https://www.youtube.com/watch?v=bZd_7moYGnY, դիտումը՝ 03.06.2021:

[6] Տե՛ս Margarita Antidze, Niko Mchedlishvili, Georgia declares state of emergency, *Reuters,* November 8, 2007, https://www.reuters.com/article/instant-article/idUKL0752768220071107, դիտումը՝ 08.06.2021:

[7] Տե՛ս Ольга Алленова, "Михаила Саакашвили хотят упразднить как пост; Оппозиция Грузии выступила против президентского правления", Газета "Коммерсантъ", №182, 05.10.2007, էջ 9:

Սաակաշվիլին ՆԱՏՕ-ի ու ԵՄ անդամ դառնալու նպատակով գործում էր Ռուսաստանի շահերի դեմ և մեծ հարված հասցնելով միջազգային հեղինակությանը՝ յուրաքանչյուր հարցում Վրաստանի ձախողումների մեղքը բարդում էր Մոսկվայի վրա:

Վրաստանում ոստիկանների և ցուցարարների բախման օրը՝ նոյեմբերի 7-ին, ԱՄՆ պետդեպարտամենտի խոսնակ Շոն Մաքքորմակը (Sean McCormack) ամենօրյա ճեպազրույցի ընթացքում կոչ է արել կառավարությանը և ընդդիմությանը խուսափելու այնպիսի գործողություններից, որոնք կարող էին բռնության պատճառ դառնալ, և հորդորեց երկխոսել՝ տարաձայնությունները հարթելու համար[1]: Սրան հաջորդեց Վաշինգտոնից ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Մեթյու Բրայզայի ուղերձը պետքարտուղար Կ. Ռայսի անունից, որը կոչ էր անում անհապաղ վերացնել արտակարգ դրությունը և վերականգնել բոլոր լրատվամիջոցների հեռարձակումները, որոնք կարևոր քայլեր էին նախագահ Սաակաշվիլիի հայտարարած արտահերթ ընտրությունների ազատ և արդար անցկացնելու համար[2]:

Այն Վրաստանին, որին ԱՄՆ նախագահ Բուշը անվանում էր «ժողովրդավարության փարոս», կոչ էին անում վերաբացել ԶԼՄ-ները և կազմակերպել ազատ ու արդար արտահերթ ընտրություններ:

Մ. Բրայզան, արդեն նոյեմբերի 10-11-ին Թբիլիսի կատարած այցի ընթացքում հանդիպում ունենալով Սաակաշվիլիի և ընդդիմության անդամների հետ, տարաձայնությունները քաղաքակիրթ ձևով՝ ընտրությունների ու երկխոսության միջոցով լուծելու համար հորդորեց վերացնել երկրում արտակարգ դրությունը և վերաբացել բոլոր հեռուստաընկերությունների հեռարձակումները[3]:

Իրադարձությունների նման զարգացումը արժանացավ վրաց հասարակության, «Human Rights Watch»-ի և այլ հասարակական-քաղաքական կազմակերպությունների բուռն քննադատություններին, իսկ «International Crisis Group»-ը (միջազգային ճգնաժամային խումբը) միջազգային հանրությանը նախազգուշացրել էր Վրաստանում ավտորիտարիզմի աճի մասին: Հետևաբար նոյեմբերի 8-ին Սաակաշվիլին արտաքին ճնշումների ներքո հայտարարեց արտահերթ ընտրությունների անցկացման մասին, որը լինելու էր 2008 թ. հունվարի 5-ին, և նախագահական ընտրություններին զուգահեռ նշանակվեց նաև պլեբիսցիտ՝ խորհրդարանական ընտրությունների օրը և ՆԱՏՕ-ի անդամության հարցը որոշելու համար[4]: Այնուհետև՝ նոյեմբերի 17-ին, Սաակաշվիլին հանեց արտակարգ դրությունը երկրում և (նոյեմբերի 25-ին) հրաժարական տվեց նախագահի պաշտոնից հետագայում այդ ընտրություններին մասնակցելու նպատակով[5]:

Վարդերի հեղափոխությանը ակտիվ աջակցող Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցացիան, կասկածի տակ դնելով Սաակաշվիլիի ստեղծած ժողովրդավարությունը, քննադատեց վրաց իշխանությունների անհամաչափ ուժի կիրառումը Թբիլիսի խորհրդարանի դիմացից խաղաղ ցուցարարներին ցրելու համար: Անգամ այս միջադեպերից երկու տարի անց իշխանությունների կողմից անհրաժեշտ քայլեր չի ձեռնարկվել մեղավորներին գտնելու և օրենքին համապատասխան պատժելու համար[6]:

---

[1] Տե՛ս State Department Daily Briefing, November 7, 2007, 1:32-3:10 ր., https://www.c-span.org/video/?202161-1/state-department-daily-briefing&start=1323#!, դիտումը՝ 09.06.2021:

[2] Տե՛ս Antoine Blua, "U.S. Envoy To Georgia To Urge End Of Emergency Rule", *RadioLiberty,* November 10, 2007, https://www.rferl.org/a/1079110.html, դիտումը՝ 10.06.2021

[3] Տե՛ս C. J. Chivers, Georgian Parliament Confirms Emergency Rule, *The New York Times,* November 10, 2007, https://www.nytimes.com/2007/11/10/world/europe/10georgia.html, դիտումը՝ 12.06.2021:

[4] Տե՛ս Human Right Watch, Crossing the Line: Georgia's Violent Dispersal of Protestors and Raid on Imedi Television, Volume 19, № 8(D), December 2007, էջ 84-85:

[5] Տե՛ս სფინქსი, "მიხეილ სააკაშვილი", საზოგადოება, *intermedia.ge,* 2012, 21 ივლისი (Սֆինքս, «Միխեիլ Սաակաշվիլի», Հասարակություն, 2012 թ. հուլիսի 21), http://intermedia.ge/%E1%83%A1%E1%83%A2%E1%83%90%E1%83%A2%E1%83%98%E1%83%90/11232-%E1%83%9B%E1%83%98%E1%83%AE%E1%83%94%E1%83%98%E1%83%9A-%E1%83%A1%E1%83%90%E1%83%90%E1%83%99%E1%83%90%E1%83%A8%E1%83%95%E1%83%98%E1%83%9A%E1%83%98/19/user:%E1%83%A1%E1%83%A4%E1%83%98%E1%83%9C%E1%83%A5%E1%83%A1%E1%83%98:show:channel, դիտումը՝ 18.06.2021:

[6] Տե՛ս საქართველოს ახალგაზრდა იურისტთა ასოციაცია, "2007 წლის 7 ნოემბრის მოვლენებზე პასუხისმგებელი პირები ჯერ არ დასჯილან", 07.11.2009 (Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա, «2007 թ. նոյեմբերի 7-ի իրադարձությունների համար պատասխանատու անձինք դեռևս չեն պատժվել»), https://gyla.ge/ge/post/2007-tslis-7-noembris-movlenebze-pasukhismgebeli-pirebi-jer-ar-dasjilan-06#sthash.gVdJHoAp.1CTWiEuf.dpbs, դիտումը՝ 12.06.2021:

Սաակաշվիլիի վարչակազմի նկատմամբ արագորեն նվազող ժողովրդի վստահությունն ու երկրում տիրող քաղաքական իրավիճակը ցույց տվեցին, որ այս իշխանությունները պատրաստ են ամեն գնով պահել իրենց իշխանությունը՝ անգամ ոտնահարելով իրենց կողմից առաջ քաշված ժողովրդավարության արժեքները: Հատկանշական է, որ նույնիսկ այն կազմակերպություններն ու երկրները, որոնք բարձր էին գնահատում Սաակաշվիլիի ջանքերը Վրաստանը ժողովրդավարության ճանապարհով տանելու համար, սկսել էին քննադատել խաղաղ ցուցարարներին՝ բռնությամբ ցրելու և երկիրը բռնապետության վերածելու համար, միևնույն ժամանակ նրանց ճնշումների և ֆինանսական աջակցության նվազեցման սպառնալիքներով պայմանավորված նշանակվեցին արտահերթ նախագահական ընտրություններ: Այս անգամ ևս ԱՄՆ-ի համար շատ կարևոր էր Վրաստանում արտահերթ ընտրությունների ազատ և արդար անցկացումը, որպեսզի չոտնահարվեն այն սկզբունքները, որոնք առաջ են քաշվել նախագահ Ջ. Բուշ Կրտսերի և նրա վարչակազմի կողմից:

Սաակաշվիլիի սխալներն ուղղելու և կրկին մեկ հնարավորություն տալու համար 2007 թ. դեկտեմբերի 13-ին ԱՄՆ Սենատը (սենատորներ Ռիչարդ Լուգարի և Ջո Բայդենի առաջարկությամբ) միաձայն ընդունեց «S.Res.391» բանաձևը, որով կոչ էր արվում նախագահ Բուշին՝ բաց քննարկում ծավալելու Վրաստանի լիդերների հետ և ԱՄՆ-ի անունից աջակցության պատրաստակամություն հայտնելու 2008 թ. հունվարի 5-ի արտահերթ ընտրություններն արդար և ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան անցկացնելու նպատակով[1]:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ 2000-ական թթ. Վրաստանը դարձավ ԱՄՆ-ի կողմից մեկ շնչի հաշվով Եվրոպայում ու Եվրասիայում օգնություն ստացող խոշորագույն երկիրը: 2001 թվականից մինչև 2007 թվականը Վրաստանին արտաքին օգնության հատկացումները կազմել են ավելի քան 945 միլիոն դոլար (միջին հաշվով տարեկան 135 միլիոն դոլար)[2]:

Ինչ վերաբերում է ՌԴ-ի և Վրաստանի միջև եղած դիվանագիտական հարաբերություններին, ապա 2004-2007 թթ. ընթացքում նախագահներ Սաակաշվիլին և Պուտինը հանդիպել են երեք անգամ՝ 2004 թ. փետրվարի 11-ին՝ Մոսկվայում Միխեիլ Սահակաշվիլիի նախագահ ընտրվելուց անմիջապես հետո, 2004 թ. հուլիսի 3-ին՝ Մոսկվայում՝ ԱՊՀ ոչ պաշտոնական գագաթնաժողովի ժամանակ, և 2005 թ. օգոստոսի 27-ին Կազանում, ինչպես նաև այդ ընթացքում նրանք հեռախոսով խոսել են 13 անգամ[3]:

Այդուհանդերձ, ՌԴ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների վատթարացումը Վրաստանի համար վերածվեց ազգային անվտանգության գլխավոր մարտահրավերի, ուստի Վրաստանը բնակչության անվտանգությունը ապահովելու նպատակով ընտրեց երկու ճանապարհ՝ ինտեգրումը ՆԱՏՕ-ի և ռազմաքաղաքական համագործակցության խորացումը Միացյալ Նահանգների հետ:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ վրաց-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունները «Վարդերի հեղափոխությունից» հետո թևակոխել են որակական նոր փուլ և այն շարունակաբար զարգացնելով՝ ձգտում են հասցնել ամենաբարձր կետին:

Նախագահ Սաակաշվիլիի ղեկավարման առաջին շրջանում (2004 թ. հունվարի 25-ից 2007 թ. նոյեմբերի 25-ը) Վրաստանը սկսեց ավելի մեծ նշանակություն ունենալ Բուշի վարչակազմի համար, քան հավանաբար պետք է ունենար: Միացյալ Նահանգներում Վրաստանը սկսեց ընկալվել որպես ժողովրդավարացման ճանապարհին գտնվող երկիր, որի իշխանությունների արտաքին քաղաքականության հենասյունը արևմտամետ էր, իսկ առաջնահերթությունը՝ ՆԱՏՕ և ԵՄ անդամակցումը: Այս ամենի նպատակը Ամերիկայից ավելի շատ աջակցություն ու ֆինանսավորում ստանալն էր և ՌԴ-ից տնտեսական կախվածության թուլացումը: ԱՄՆ-ն աշխարհին ներկայացրեց Վրաստանը որպես

---

[1] Տե՛ս S.Res.391 - A resolution calling on the President of the United States to engage in an open discussion with the leaders of the Republic of Georgia to express support for the planned presidential elections and the expectation that such elections will be held in a manner consistent with democratic principles, 110th Congress (2007-2008), *Gongress.gov,* December 13, 2007, https://www.congress.gov/bill/110th-congress/senate-resolution/391, դիտումը՝ 02.07.2021:

[2] Տե՛ս Cory Welt, Georgia: Background and U.S. Policy, Congressional Research Service R45307, April 14, 2021, էջ 18, https://fas.org/sgp/crs/row/R45307.pdf, դիտումը՝ 10.07.2021:

[3] Տե՛ս Владимир Новиков, “Михаил Саакашвили дозвонился до Владимира Путина и договорился о встрече”, Газета "Коммерсантъ Украина", №92, Тбилиси, 05.06.2006, էջ 6:

արևմտյան երկրների կողմից ժողովրդավարության խթանման ջանքերի արդյունք և ապացույց, հետևաբար ժողովրդավարությունը դեռ կարող էր տարածվել գլոբուսի մինչ այժմ չպատկերացված մասեր: Վարդերի հեղափոխությունը ներկայացվեց այնպես, որ մի քանի շաբաթվա ընթացքում Վրաստանը դարձրել է ժողովրդավարական, այլ ոչ թե Վրաստանի ներքաղաքական բարդ իրադարձությունների զարգացման լուրջ արդյունք, ինչն ավելի ակնհայտ դարձրեց Հարավային Կովկասում հաստատվելու ԱՄՆ ձգտումները:

Վերոնշյալ գաղափարը հաստատվում է նաև պաշտոնական հռետորաբանության ու հրապարակված իրավանորմատիվ տեքստերի վերլուծության արդյունքում: Մասնավորապես Մ. Սաակաշվիլիի նախագահության առաջին տարուց սկսած՝ Արտաքին քաղաքականության ռազմավարության ու Ազգային անվտանգության հայեցակարգի, ինչպես նաև Վրաստանի առաջին դեմքերի (նախագահ, վարչապետ, արտաքին գործերի նախարար)՝ Միացյալ Նահանգների ներկայացուցիչների հետ պաշտոնական հանդիպումների տեքստերում արտացոլված են Վրաստանում ժողովրդավարության հիմքերի ամրապնդման անհրաժեշտության և կարևորության մասին: Վրացական հայեցակարգային ու իրավանորմատիվ փաստաթղթերում մշտապես ընդգծված էր երկրի պատկանելիությունը արևմտյան արժեհամակարգին որպես ընդհանուր քաղաքակրթություն[1]: Իսկ Միացյալ Նահանգների հետ հարաբերություններն դիտարկված են որպես ընդհանուր արժեքների և քաղաքական շահերի հիման վրա ձևավորված հարաբերություններ:

Երկու պետությունների պաշտոնական ներկայացուցիչների հանդիպումներում վրացական քաղաքական գործիչները մշտապես ընդգծում էին Միացյալ Նահանգների աջակցության կարևորությունն ու առանձնացնում նմանատիպ աջակցման արդյունքում կառավարության արձանագրած ձեռքբերումները: Հաճախ հիշատակվում էր, որ Վրաստանը տարածաշրջանում ժողովրդավարական արժեքների ձևավորման «ցայտուն օրինակ է»:

Այսպիսով՝ Վարդերի հեղափոխությունից հետո վրաց-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների ընդլայնման կորիզը դարձավ Վրաստանում ժողովրդավարական ինստիտուտների ու արժեքների ներդրման գործընթացը, ինչն ուղեկցվում էր Միացյալ Նահանգների կողմից բազմակողմ աջակցությամբ: Այնուամենայնիվ, պետք է արձանագրենք, որ ժողովրդավարության ներմուծումը Վրաստան բավականին բարդ գործընթաց էր, ինչը պայմանավորված էր նախկին քաղաքական ռեժիմի ժամանակաշրջանից արմատավորված արխայիկ քաղաքական վարքագծի ու արժեքների պահպանմամբ: Այսպիսի պայմաններում Միացյալ Նահանգները շարունակեց իր լուրջ քաղաքական ներկայությունն ապահովել Վրաստանում, քանի որ Սաակաշվիլիի կառավարությունը՝ որպես վերջին տասնամյակներում առավել մեծ լեգիտիմություն ունեցող իշխանություն, դեռևս ուներ հասարակական լայն շերտերի աջակցությունն ու դրական վերաբերմունքը:

***Эдгар Чахоян, ДИПЛОМАТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ГРУЗИИ И США ПРИ ПЕРВОМ ПРЕЗИДЕНТСКОМ СРОКЕ МИХАИЛА СААКАШВИЛИ (2004-2007 гг.).*** Статья посвящена исследованию дипломатических отношений между Грузией и США в первый период президентства Михаила Саакашвили в Грузии в 2004-2007 гг. Подробно освещена история формирования, укрепления и углубления дипломатических отношений между странами, развития во внутренней и внешней политике, а также дипломатические успехи, достигнутые в результате частых встреч высокопоставленных официальных лиц двух стран. Выявлены и изучены внешнеполитические подходы администрации президента США Джорджа Буша к Грузии, в частности, от «революции роз» до конца 2007 года, а также проблемы, которые возникли для Армении в результате изменений, имевших место в Грузии. Были всесторонне рассмотрены особенности визита президента Буша в Тбилиси (май 2005 г.), ожидаемые изменения в регионе и тенденции Грузии стать «экспортером» демократии. Проанализированы роль и значение двусторонних документов, подписанных сторонами. Были рассмотрены различные факты, способство-вавшие развитию двусторонних и многосторонних дипломатических отношений между Грузией и США. Особое

[1] Տե՛ս Ministry of Foreign Affairs of Georgia, Foreign Policy Strategy 2006-2009, *mfa.gov.ge,* https://www.gfsis.org/media/download/GSAC/resources/115_1973_997704_Strategy_MFA2006-2009En.pdf, դիտումը՝ 28.07.2021:

внимание было уделено выявлению реальных причин ухудшения дипломатических отношений между Грузией и Российской Федерацией. Особое место в статье отведено изучению целей финансовой и активной поддержки США для проведения справедливых и прозрачных внеочередных выборов в Грузии.

***Ключевые слова:*** *Грузия, США, демократия, внеочередные президентские выборы, НАТО, Запад, Россия, дипломатические отношения, Южный Кавказ, региональная безопасность, госсекретарь, внеочередные выборы, Исследовательский центр «Лугара».*

***Edgar Chakhoyan, DIPLOMATIC RELATIONS BETWEEN GEORGIA AND THE USA DURING THE FIRST PERIOD OF THE PRESIDENCY OF MIKHAIL SAAKASHVILI (2004-2007).*** The article is devoted to the study of diplomatic relations between Georgia and the United States during the first period of the presidency of Mikhail Saakashvili in Georgia in 2004-2007. The history of the formation, strengthening and deepening of diplomatic relations between the countries, developments in domestic and foreign policy, as well as diplomatic successes achieved as a result of frequent meetings of high-ranking officials of the two countries have been highlighted in details. The foreign policy approaches of the US President George W. Bush's administration to Georgia, in particular, from the Rose Revolution to the end of 2007, as well as the problems that arose for Armenia as a result of the changes that took place in Georgia, have been identified and studied. The specifics of President Bush's visit to Tbilisi (May 2005), expected changes in the region and Georgia's tendencies to become an "exporter" of democracy have been comprehensively considered. The role and significance of bilateral documents signed by the parties have been analyzed. Various facts have been considered that have contributed to the development of bilateral and multilateral diplomatic relations between Georgia and the United States. Particular attention has been paid to identifying the real reasons for the deterioration of diplomatic relations between Georgia and the Russian Federation. A special attention has been paid in the article to the study of the goals of the US financial and active support for holding fair and transparent snap elections in Georgia.

***Key words:*** Georgia, USA, democracy, snap presidential elections, NATO, West, Russia, diplomatic relations, South Caucasus, regional security, secretary of state, snap elections, Lugar Research Center.

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

*ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ*

# ИСТОРИЯ И КУЛЬТУРА

*АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ*

# HISTORY AND CULTURE

*JOURNAL OF ARMENIAN STUDIES*


## 2021, № 2

**Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան**

**Խմբագիր՝ Միքայել Մալխասյան**

**Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան**
**Սրբագրումը՝ Մերի Հովհաննիսյանի**
**Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի**

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

**Տպաքանակը՝ 300**